ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԾԱԽՍԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԻՆՈՎԱՑԻՈՆ ՄԵԹՈԴՆԵՐ *

ՀՏԴ 336. 1:352 *DOI: 10.52063/25792652-2025.1.24-283*

ԴԻԱՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
ֆինանսական ֆակուլտետի ֆինանսների ամբիոնի հայցորդ,
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
diana.martirosyan.970@gmail.com
ORCID: 0009-0003-1630-5028

Հոդվածի նպատակն է հասկանալ բյուջեի ծախսերի արդյունավետության բարձրացման կարևորությունը, վերհանել հիմնական մեթոդները և դրանց կիրառման հնարավոր արդյունքները: Ժամանակակից աշխարհում, երբ ռեսուրսները սահմանափակ են, իսկ հանրության պահանջները՝ աճող, կարևոր է յուրաքանչյուր դրամ ծախսել այնպես, որ այն առավելագույն արդյունք բերի: Այս գործընթացը պահանջում է թե՛ քաղաքական կամք, թե՛ վարչական հմտություններ:

Նպատակին հասնելու համար հիմք են հանդիսացել հետևյալ խնդիրները՝ ուսումնասիրել միջազգային տարբեր մոդելներ, դուրս բերել այնպիսի գործիքակազմեր, որոնք կարող են կիրառվել Երևան քաղաքում՝ ապահովելով բյուջեի ռացիոնալ օգտագործումը, բարձրացնելով ծառայությունների որակը:

Ուսումնասիրությունների և վերլուծությունների իրականացման ընթացքում կիրառվել են ինդուկցիայի, դեդուկցիայի և վերլուծության մեթոդները:

Արդյունավետ բյուջետավորումը ոչ միայն խնայում է պետական միջոցները, այլև բարելավում է հանրային ծառայությունների որակը և խթանում տնտեսական աճը, սակայն այն ունի իր մարտահրավերները՝ կապված հին համակարգերի փոփոխության, աշխատակիցների վերապատրաստման և երբեմն էլ՝ քաղաքական դիմադրության հաղթահարման հետ:

Այսպիսով՝ բյուջեի ծախսերի արդյունավետության բարձրացումը կարևոր է պետական և մասնավոր կազմակերպությունների համար՝ ռեսուրսների օպտիմալ օգտագործման, ֆինանսական կայունության համար: Արդյունավետ ծախսերը նպաստում են տնտեսական աճին, հանրային ծառայությունների որակի բարելավմանը և հարկատուների վստահության բարձրացմանը:

Հիմնաբառեր՝ *բյուջե, ծախս, արդյունավետություն, ռեսուրս, կառավարում, բարելավում, գնահատում:*

---

* Հոդվածը ներկայացվել է 30.01.2025թ., գրախոսվել՝ 25.02.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.04.2025թ.:

Ներածություն

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության ֆինանսավորումը և դրանց առջև ծառացած խնդիրների լուծումն իրականացվում է բյուջետային ծախսերի միջոցով: Այս ծախսերի արդյունավետությունը գնահատվում է՝ հաշվի առնելով դրանց ազդեցությունը պետական հիմնախնդիրների լուծման վրա: Այս գնահատումն իրականացվում է՝ հաշվի առնելով հասարակական բարիքների արտադրության անհրաժեշտությունը, շուկայի անկատարությունը, տարբեր տեսակի արտաքին ազդեցությունները և սոցիալական արդարության ապահովման նպատակով ռեսուրսների վերաբաշխման անհրաժեշտությունը:

Բյուջետային ծախսերի ցածր արդյունավետության հիմնական պատճառներից են՝

1. <u>Քաղաքական և վարչարարական գործոնների գերակայությունը:</u>

Բյուջետային ծախսերի ծավալի, ուղղությունների և կառուցվածքի որոշումը հաճախ ավելի շատ քաղաքական ընտրության և վարչական համակարգի առանձնահատկությունների արդյունք է, քան տնտեսական հիմնավորված որոշման: Այս իրավիճակում դժվար է առանձնացնել զուտ տնտեսական բաղադրիչը, քանի որ քաղաքական նկատառումները հաճախ գերակշռում են տնտեսական հիմնավորումներին:

2. <u>Որոշումների կայացման գործիքների անբավարարությունը:</u> Բյուջեի օպտիմալ կառուցվածքի և ծավալի որոշման համար հաճախ բացակայում են անհրաժեշտ վերլուծական գործիքները: Հիմնական վերլուծական մեթոդներից են «ծախսեր-օգուտներ», «ծախսեր-արդյունավետություն» և «ծախսեր-օգտակարություն» վերլուծությունները: Այս մեթոդները թույլ են տալիս համեմատել տարբեր ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները և դրանցից ակնկալվող օգուտները (Բոստանջյան 277-280):

Կամպոսը և Պրադհանը բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացման նպատակով առաջարկում են ներդնել հետևյալ ինստիտուցիոնալ մեխանիզմները՝

- ✓ Բյուջետային պլանավորման և արդյունքների կապի ամրապնդում

Բյուջետային ծախսերի պլանավորման գործընթացը պետք է ուղղակիորեն կապված լինի ակնկալվող արդյունքների հետ: Այս մոտեցումը պետք է համահունչ լինի միջնաժամկետ ծախսային գերակայություններին՝ ապահովելով երկարաժամկետ ռազմավարական նպատակների և կարճաժամկետ բյուջետային որոշումների միջև կապը:

- ✓ Գործադիր մարմինների ճկունության մեծացում

Պետական կառավարման համակարգի գծային ստորաբաժանումներին պետք է տրվի ավելի մեծ ինքնուրույնություն՝ ծախսային ծրագրերի միջև ֆինանսական միջոցների վերաբաշխման հարցում: Սա թույլ կտա ավելի արագ և արդյունավետ արձագանքել փոփոխվող իրավիճակներին և օպտիմալ օգտագործել հասանելի ռեսուրսները:

- ✓ Գերակայությունների ընտրության հստակ համակարգի ստեղծում

Անհրաժեշտ է մշակել և ներդնել հստակ չափանիշներ և մեխանիզմներ՝ ծախսային գերակայությունների ընտրության համար: Սա կօգնի ապահովել ռեսուրսների արդյունավետ բաշխումը և կնպաստի թափանցիկ ու հիմնավորված որոշումների կայացմանը:

Այս մոտեցումների ներդրումը կարող է նպաստել բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացմանը՝ ապահովելով ավելի նպատակային, ճկուն և թափանցիկ բյուջետային գործընթաց (Բոստանջյան 303-304):

Բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացման լավագույն մոտեցումները

Ծախսերի արդյունավետությունը ցանկացած հաջողության կարևոր կողմն է, քանի որ այն ուղղակիորեն ազդում է շահութաբերության և կայունության վրա (Բյուջեի վերլուծություն և մշտադիտարկում 2023): Հնարավոր է արդյունավետորեն կառավարել ծախսերը և առավելագույնի հասցնել ռեսուրսները՝ հետևելով մի քանի պարզ կետերի.

1. **Կատարել ծախսերի մանրակրկիտ վերլուծություն.** սկսել գնահատելով ընթացիկ ծախսերը և բացահայտելով այն ոլորտները, որտեղ կարելի է հասնել ծախսերի օպտիմալացման: Վերլուծել բյուջեն, գործառնությունները և ռեսուրսների բաշխումը՝ ծախսերի կառուցվածքի ամբողջական պատկերացում կազմելու համար:
2. **Օգտագործել տեխնոլոգիա և ավտոմատացում.** օգտվել տեխնոլոգիական առաջընթացներից՝ գործառնությունները պարզեցնելու և ձեռքի աշխատանքը նվազեցնելու համար: Ավտոմատացման գործիքները կարող են օգնել վերացնելու ավելորդ առաջադրանքները, բարձրացնելու արտադրողականությունը և նվազագույնի հասցնելու մարդկային սխալները՝ ի վերջո հանգեցնելով ծախսերի խնայողության:
3. **Էներգաարդյունավետ մեթոդների ներդրում.** Էներգիայի սպառումը հաճախ կազմում է գործառնական ծախսերի զգալի մասը: Ներդնել էներգաարդյունավետ տեխնոլոգիաներ, ինչպիսիք են լուսադիոդային լուսավորությունը, խելացի թերմոստատները և էներգիայի կառավարման համակարգերը՝ էներգիայի սպառումը նվազեցնելու և կոմունալ վճարումները նվազեցնելու համար:

Կարևոր է նկատի ունենալ, որ վերոնշյալ կետերը պետք է դիտարկել որպես ելակետային ուղենիշ: Յուրաքանչյուր կազմակերպություն ունի իր յուրահատկությունները, ուստի՝ ծախսերի արդյունավետության բարձրացման ռազմավարությունը պետք է համապատասխանեցնել գործունեության ոլորտին, ընկերության բիզնես մոդելին, սահմանված նպատակներին և խնդիրներին:

Այս մոտեցումը թույլ կտա ոչ միայն բարելավել ծախսերի արդյունավետությունը, այլև ստեղծել հիմք՝ երկարաժամկետ և կայուն զարգացման համար: Հիշեք, որ ծախսերի օպտիմալացումը շարունակական գործընթաց է, որը պահանջում է ճկունություն և պատրաստակամություն՝ հարմարվելու փոփոխվող պայմաններին և նոր մարտահրավերներին (Эффективность затрат: повышение эффективности затрат и показатели 2024):

Երևանի քաղաքի ծախսարդյունավետության զարգացման նորարարական մոտեցումներ

Երևանի նման քաղաքի համար ծախսարդյունավետության գնահատմանը կարելի է մոտենալ՝ կենտրոնանալով այնպիսի ոլորտների վրա, ինչպիսիք են տրանսպորտը, էներգաարդյունավետությունը, թափոնների կառավարումը և հանրային առողջությունը:

Ներկայացնեմ մի քանի գլոբալ օրինակներ, որոնք ընդգծում են քաղաքաշինության և ենթակառուցվածքների ծախսերի արդյունավետության բարձրացման արդյունավետ ռազմավարությունները.

<u>Քաղաքի կոմպակտ զարգացում.</u> Քաղաքային կոմպակտ աճը ծախսերի արդյունավետությունը բարձրացնելու ապացուցված մեթոդ է՝ կրճատելով ենթակառուցվածքների համար անհրաժեշտ կապիտալը: Քաղաքները, ինչպիսիք են Տոյամա և Ֆուկուոկան, ներդրել են զարգացման կոմպակտ մոդելներ, որոնք

միավորում են տրանսպորտը և քաղաքային նորացումը՝ նվազեցնելով ծախսերը՝ միաժամանակ բարելավելով կյանքի որակը: Տոյաման 75%-ով կրճատել է ենթակառուցվածքի ծախսերը՝ օգտագործելով հին երկաթուղային գծերը՝ նորերը կառուցելու համար (World Bank Blogs 2021):

Պետություն-մասնավոր համագործակցություն: Ճապոնիայի ենթակառուցվածքների կառավարման փորձը ցույց է տալիս պետական և մասնավոր հատվածների համագործակցության կարևորությունը ծախսերի արդյունավետության բարձրացման գործում: Այս մոտեցման հաջողված օրինակ է Տոյամա քաղաքի փորձը: Տոյամայի օրինակը ցույց է տալիս, որ պետական-մասնավոր համագործակցությունը կարող է լինել արդյունավետ գործիք ենթակառուցվածքների կառավարման ոլորտում՝ քաղաքացիների համար ապահովելով ծախսերի օպտիմալացում և բարձր որակի ծառայություններ:(World Bank Blogs 2021): Վերջին շրջանում աշխարհի զարգացած երկրները մասնավոր հատվածին ավելի ու ավելի շատ են մասնակից դարձնում տնտեսական քաղաքականության նպատակների իրականացման գործընթացին: Պետություն–մասնավոր գործակցության արդյունքում պետությունը կարողանում է խնայել սեփական միջոցներն ու դրանք ուղղել հանրային կարևորության այլ խնդիրների լուծմանը, իսկ մասնավոր հատվածը, համագործակցելով պետության հետ, կարողանում է օգտագործել սեփական ռեսուրսները և հավելյալ արդյունք ու եկամուտ ապահովել (Ավագյան և Վարդանյան 22):

Երևան քաղաքի ծախսերի գնահատմանն ուղղված ելակետային ոլորտները

Երևան քաղաքի ծախսարդյունավետության գնահատումը պահանջում է բազմապիսի մոտեցում՝ վերլուծելով հիմնական ոլորտները, ինչպիսիք են հանրային ծառայությունները, ենթակառուցվածքները և շրջակա միջավայրի կայունությունը:

1. Հասարակական տրանսպորտ.

Հանրային տրանսպորտը Երևանի համար հսկայական ծախսերի դաշտ է, սակայն դրա արդյունավետ կառավարումը և օպտիմալացումը կարող է մեծապես բարելավել քաղաքի ենթակառուցվածքների կառավարման ծախսարդյունավետությունը: 2025 թվականին իրականացված նոր՝ մեծածավալ փոփոխությունը տրանսպորտային համակարգի բնագավառում միտված է հենց Երևան քաղաքում ծախսարդյունավետության բարելավմանը՝ շեշտը դնելով տրանսպորտի ավտոպարկի արդիականացմանը: (Երևան քաղաքի ավագանու որոշում, 12. 03. 2024թ. հ. 95-Ն): Արդեն իսկ ներդրված Էլեկտրոնային վճարման համակարգը կբարձրացնի տրանսպորտային համակարգի ֆինանսական թափանցիկությունը և կօգնի կառավարել միջոցները: Այս ամենի իրականացման և տրանսպորտային ենթակառուցվածքների բարելավման համատեքստում առաջարկվում է հաջորդիվ իրականացնել երթուղիների մասնագիտական վերլուծություն և օպտիմալացում՝ նվազեցնելով գերբեռնվածությունը և ապահովելով ավելի սահուն երթևեկություն: Դա հնարավոր է անել նոր տեխնոլոգիաների կիրառմամբ՝ իրական ժամանակում երթևեկության տվյալների վրա հիմնված:

2. Թափոնների կառավարում.

Երևանի քաղաքապետարանը հանձնառություն էր վերցրել կոշտ թափոնների կառավարման, տեսակավորված թափոնների հավաքման և/կամ վերամշակման գործում, որը սակայն այդպես էլ չծառայեց իր նպատակին: (Քաղաքային կոշտ թափոնների նախնական վերամշակման ծրագիր): Ուստի՝ ծախսերի արդյունավետությունը բարելավելու համար առաջարկվում է վերսկսել ծրագիրը, որի իրականացման համար Երևանը կարող է ներդրումներ կատարել վերամշակման և թափոնները էներգիայի վերածելու նախաձեռնություններում, ինչը կնվազեցնի

աղբավայրերի պահպանման և շրջակա միջավայրի վնասների հետ կապված երկարաժամկետ ծախսերը:

3. Էներգաարդյունավետություն.

Երևանում ընթանում են էներգաարդյունավետությանը և էներգախնայողությանն ուղղված ծրագրեր պետական աջակցությամբ, որում Երևանը նույնպես ունի իր ներդրումը, մասնավորապես՝ հանրային լուսավորության բարելավման միջոցով: (Երևան քաղաքի 2025 թվականի բյուջե): Այս ծրագրերի ընդլայնումը հանրային շենքերի և բնակելի տարածքների վրա կարող է բերել հետագա խնայողությունների:

4. Բնապահպանական նախաձեռնություններ.

Համաձայն առողջապահության համաշխարհային կազմակերպության՝ առաջարկվում է մեկ շնչի հաշվով 9 մ² կանաչ տարածք: Կանաչ ենթակառուցվածքների ընդլայնումը և օդի աղտոտվածության նվազեցումը կանաչ տարածքների և հասարակական տրանսպորտի բարելավման միջոցով կարող է բերել զգալի երկարաժամկետ առողջապահական և տնտեսական օգուտներ՝ բարձրացնելով քաղաքային ներդրումների ծախսարդյունավետությունը:

Եզրահանգումներ

Երևան քաղաքի ընդհանուր ծախսարդյունավետությունն ունի առանձնահատկություններ՝ էներգաարդյունավետության և հանրային տրանսպորտի գնագոյացման ոլորտում բարձր ցուցանիշներով, բայց թափոնների կառավարման և շրջակա միջավայրի կայունության հետ կապված մարտահրավերներով: Ներդրումները ժամանակակից ենթակառուցվածքներում, հանրային առողջության մեջ կարող են զգալիորեն բարձրացնել քաղաքի ծախսարդյունավետությունը՝ միաժամանակ բարելավելով բնակիչների կյանքի որակը:

Ներդրումներն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են հասարակական տրանսպորտը և էներգաարդյունավետությունը, ցույց են տալիս ծախսերի խնայողության բարձր ներուժ, մինչդեռ թափոնների կառավարումը և առողջապահությունը պահանջում են բարեփոխումներ և ավելի մեծ ռեսուրսների բաշխում արդյունավետությունը բարելավելու համար:

Այս գնահատումներից յուրաքանչյուրը պետք է հարմարեցվի Երևան քաղաքի համապատկերին՝ հաշվի առնելով տեղական բնապահպանական, սոցիալական և տնտեսական պայմանները: Մանրակրկիտ վերլուծությունը կներառի տվյալների մանրամասն հավաքագրում, շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցություն և երկարաժամկետ արդյունքների կանխատեսման մոդելների օգտագործում:

Այս տարբերակները մեկնարկային կետ են ստեղծում Երևանի քաղաքականություն մշակողների համար՝ ներդրումների վերաբերյալ տեղեկացված որոշումներ կայացնելու, որոնք օպտիմալացնում են և՛ ծախսերը, և՛ օգուտները՝ քաղաքի կայուն զարգացման համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բոստանջյան, Վարդան, Բաբկենի. *Բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում.* ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2017:

2. Ավագյան, Գայանե և Վարդանյան, Քնարիկ. «Պետություն-մասնավոր գործընկերությունը որպես ենթակառուցվածքների զարգացման խթան». *Տնտեսություն և հասարակություն,* ՀՊՏՀ, Տնտեսագետ, 1(1), էջ 21-44:

3. Երևան քաղաքի ավագանու որոշում. *«Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձը սահմանելու մասին»*. 12. 03. 2024թ. h. 95-Ն. https://www.yerevan.am/hy/elders-decisions/95-n-1/: Մուտք՝ 01. 03. 2025:

4. *Երևան քաղաքի 2025 թվականի բյուջե*. https://www.yerevan.am/hy/finance/: Մուտք՝ 01. 03. 2025:

5. Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն (EDRC). *«Բյուջեի վերլուծություն և մշտադիտարկում» ուղեցույց*. 2023թ. , https://budgets.am/wp-content/uploads/2023/12/Budget-Analysis-and-Monitoring-Guide_29%E2%80%A409.23-Final.pdf: Մուտք՝ 01. 03. 2025:

6. Երևանի քաղաքապետարան. *Քաղաքային կոշտ թափոնների նախնական վերամշակման ծրագիր*. 2017, https://www.yerevan.am/uploads/media/default/0001/60/d160b343b467287d5544e215d5b458cda751c3d8.pdf: Մուտք՝ 01. 03. 2025:

7. World Bank Blogs. *Urban infrastructure in Japan: Lessons from infrastructure quality investment principles*. 22. 03. 2021, https://blogs.worldbank.org/en/ppps/urban-infrastructure-japan-lessons-infrastructure-quality-investment-principles. Accessed: 15. 09 . 2024.

8. *Эффективность затрат: повышение эффективности затрат и показатели*. 23. 03. 2024, https://shorturl.at/F9iTo. Последний визит: 14.09.2024.

WORKS CITED

1. Avagyan Gayane ev Vardanyan Qnarik, «Petutyun-masnavor gorcynkerutyun vorpes entakarucvacqneri zargacman xtan» [Public-Private Partnership as an Incentive for Infrastructure Development], Tntesutyun ev hasarakutyun, HPTH, Tntesaget, 1(1)], ej 21-44, https://asue.am/upload/files/science/economy/2023-year-1/2.pdf, (In Armenian)

2. Bostanjyan Vardan Babkeni, Byujetayin tsaxseri ardyunavetutyan bardzracman himnaxndirnery ev dranc lutsman uxinery Hayastani Hanrapetutyunum [Problems of increasing the efficiency of budget expenditures and ways of their solution in the Republic of Armenia.], EPH hrataharkchutyun, Erevan, 2017, 364 ej, (In Armenian)

3. Effektivnost' zatrat: Povyshenie effektivnosti zatrat i pokazateli [Cost-Effectiveness: Cost Efficiency Improvement and Indicators.], 23. 03. 2024, https://shorturl.at/F9iTo, Accessed: 14.09.2024, (In Russian).

4. Erevan hamaynqum 100 tokos hamaynqayin masnakcutyamb operatori koghmic nerhamaynqayin avtobusayin kanonavor poxadrumneri spasarkman depqum ertughineri spasarkman poxadravardy sahmanelow masin, Erevan qaghaqi avaganu voroshum [Decision of the Council of Elders of Yerevan. ‘On the establishment of route fare in case of regular intra-community bus services by an operator with 100 per cent community participation in Yerevan community], 12. 03. 2024t. h. 95-N, https://www.yerevan.am/hy/elders-decisions/95-n-1/, Accessed: 01. 03. 2025, (In Armenian)

5. Erevan qaghaqi 2025 tvakani byuje [Yerevan City Budget for 2025], https://www.yerevan.am/hy/finance/, 01. 03. 2025, (In Armenian)

6. Qaghaqayin kosht taponneri naxnakan veramshakman cragir, Erevani qaghaqapetaran [Yerevan City Hall. Municipal solid waste pre-processing programme], 2017,

https://www.yerevan.am/uploads/media/default/0001/60/d160b343b467287d5544e215d5b458cda751c3d8.pdf, (In Armenian)

7. Tntesakan zargacman ev hetazotutyunneri kentron (EDRC), «Byujei verlucutyun ev mshtaditarkum» [Budget analysis and monitoring] ughecuyc], 2023t. , https://budgets.am/wp-content/uploads/2023/12/Budget-Analysis-and-Monitoring-Guide_29%E2%80%A409.23-Final.pdf, 01. 03. 2025, (In Armenian)

INNOVATIVE METHODS TO INCREASE COST EFFICIENCY OF YEREVAN CITY

DIANA MARTIROSYAN
Armenian State University of Economics, Financial faculty,
Department of finance, Ph.D Student,
Yerevan, the Republic of Armenia

The purpose of the article is to understand the importance of increasing the efficiency of budget expenditures, to highlight the main methods and the possible results of their application. In the modern world, when resources are limited and public demands are growing, it is important to spend every dram in a way that brings maximum results. This process requires both political will and administrative skills.

The following tasks served as the basis for achieving the goal: to study various international models, to develop such toolkits that can be applied in the city of Yerevan, ensuring the rational use of the budget, increasing the quality of services.

Induction and deduction, as well as analysis methods, were used during the implementation of studies and analyses.

Effective budgeting not only saves state funds, but also improves the quality of public services and stimulates economic growth. However, it has its challenges related to changing old systems, training employees and sometimes overcoming political resistance. Thus, in conclusion, I would like to note that increasing the efficiency of budget expenditures is important for both public and private for organizations to ensure optimal use of resources, financial stability. Efficient spending contributes to economic growth, improved quality of public services and increased taxpayer confidence.

Keywords: *Budget, cost, efficiency, resource, management, improvement, evaluation.*

ИННОВАЦИОННЫЕ МЕТОДЫ ПОВЫШЕНИЯ РАСХОДОВОЙ ЭФФЕКТИВНОСТИ ГОРОДА ЕРЕВАНА

ДИАНА МАРТИРОСЯН
соискатель финансового факультета
Армянского государственного экономического университета,
г. Ереван, Республика Армения

Цель статьи – подчеркнуть важность повышения эффективности бюджетных расходов, выявить основные методы и возможные результаты их применения. В современном мире, когда ресурсы ограничены, а запросы общества растут, важно реализовать финансы таким образом, чтобы получить максимальный результат. Этот процесс требует как политической воли, так и административных навыков.

Для достижения цели исследования были поставлены следующие задачи: изучение различных международных моделей, разработка инструментов, обеспечивающих рациональное использование бюджета города Еревана и повышение качества услуг.

В ходе исследования и анализа использовались методы индукции и дедукции, а также методы анализа.

Эффективное распределение и расход бюджета не только экономит государственные средства, но и повышает качество государственных услуг и стимулирует экономический рост. Однако оно имеет свои проблемы, связанные с изменением старых систем, обучением сотрудников, а иногда и преодолением политического сопротивления. Таким образом, в заключение необходимо отметить, что повышение эффективности бюджетных расходов имеет важное значение для государственных и частных организаций для оптимального использования ресурсов, финансовой устойчивости. Эффективный расход финансов способствуют экономическому росту, повышению качества государственных услуг и повышению доверия налогоплательщиков.

Ключевые слова: *бюджет, стоимость, эффективность, ресурс, управление, улучшение, оценка.*